ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՁԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ

Ներկայ տարուս փետրվարի 15-ին Ձեմարանիս գուրս գնացած Լատարանների ուսանողներից ոմանք խնդրամատոյց են եղել Ձեմարանի Վարչութեանս կրկին ընդունելու համար։ Արանով Վարչութիւնս յայտնում է ի գիտութիւն բոլոր ուսանողներին, որոնք ուզին օրինաւոր վկայագիր և կամենում են իրանց ուսումը շարունակել, որ Վարչութիւնս պատրաստ է ընդունել բոլոր ցանկացողներին և միջոց տալ Ձեմարանական դասընթացը աւարտելով Մրցագիր (դիպլոմ) ձեռք բերելու։

Վերստին Ձեմարան մտնել ցանկացողները պէտք է խնդրագրով դիմեն Ամենապատիւ Գրիգորան Տեղակալին։

Գուրս գնացած Աւագին լատարանցիները առանց քննութեան կընդունուին Երկրորդ լատարան, այն պայմանաւ, որ ուսումնական տարուայ վերջում հարցաքննուին թէ Աւագին և թէ Երկրորդ լատարանների աւարտեալներից։ Իսկ Երկրորդ լատարանցիները կընդունուին առանց քննութեան Երրորդ լատարան, նմանապէս այն պայմանաւ, որ ուսումնական տարուայ վերջում հարցաքննուին թէ Երկրորդ և թէ Երրորդ լատարանների աւարտեալներից։

Իսկ Երրորդ լատարանցիներին, որոնց միայն մի-երկու ամիս էր մնացել Ձեմարանական ամբողջ դասընթացն աւարտելու, իրաւունք է տրուում՝ վերջնական քննութեան ներկայանալ Մրցանակագիր ստանալու համար, այս առաջիկայ Սեպտեմբերին կամ 1892-ի Յունուարի արձակուրդներին և կամ 1892-ի մայիսեան հարցաքննութեանց ժամանակ, նայելով իրենց յարմարութեանը։ Իսկ որոնք առանձին պատրաստուելու միջոց չեն ունենալ կարող են առաջիկայ Սեպտեմբերից մտնել Երրորդ լատարան և շարունակել։

Տեսուչ Ձեմարանի՝ ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ,

Հ18-ն Ապրիլի, 1891 ամի.

Ի Ս. Էջմիածին։